Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի օգոստոսի 22-ի N 1392-Լ որոշմամբ հաստատված՝ «Մթերատվության բարձրացման փորձնական ծրագրի» շրջանակներում 2026 թվականին շարունակվում է պետական աջակցություն ցուցաբերել կովերի արհեստական սերմնավորման գործընթացի իրականացմանը: Մարզի համայնքներում <<Մթերատվության բարձրացման փորձնական ծրագրի>> իրականացման արդյունավետությունը բարելավելու, ֆերմերային տնտեսությունների կողմից պահվող խոշոր եղջերավոր կենդանիների մթերատվության հատկանիշների ու եկամտաբերության բարձրացմանն աջակցելու նպատակով, ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի և ՀՀ Էկոնոմիկայի նախարարության համատեղ պայմանավորվածության արդյունքում, կշարունակվի հայտերի ընդունման ժամկետների երկարացման գործընթացը՝ սահմանված կարգի համաձայն: https://www.arlis.am/hy/acts/207595